



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Միրելի ընթերցող,

Քո դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի անդրանիկ համարը: Գրադարանային գործն իր բազմաբովանդակ գործառնությունով բոլոր ժամանակներում համարվել է հասարակական և մշակութային զարգացման խթանիչ գործոններից մեկը: Մակայն երբ հայացք ենք նետում դեպի անցյալ՝ ուսումնասիրելու, թե գրադարանային գործը և գրադարանագիտական աշխատանքը լուսաբանող հայալեզու ինչ հանդեսներ են հրատարակվել, ապա տեսնում ենք, որ պատկերը խիստ աղքատիկ է: 1941թ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը հրատարակել է «Բիբլիոգրաֆիական ամսագիրը» (գլխավոր խմբագիր՝ Հրայրա Քոչար): 1941թ. մայիսին հրատարակվել է ընդամենը մեկ համար և, ամենայն հավանականությամբ, երբ ծագեց Հայրենական պատերազմը, ամսագրի հետագա հրատարակումը դադարեցվեց:

Երկար ընդմիջումից հետո 1960թ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը սկսում է հրատարակել «Գրադարանավար» մասնագիտական ամսագիրը (տարեկան 8 համար), որը 1961թ. անվանափոխվելով՝ դառնում է «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (հրատարակիչ՝ Հայկական ՄՍՀ կուլտուրայի մինիստրություն): Ամսագիրը հասարակական-քաղաքական, մշակույթի և արվեստի հարցերին անդրադարձող գիտամեթոդական հանդես էր: 1989թ. հանդեսն անվանափոխվելով՝ շարունակվում է հրատարակվել «Մշակույթ» խորագրով՝ որպես Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստրության և մշակույթի ֆոնդի հասարակական քաղաքական, մշակույթի և արվեստի հարցերով գիտահանրամատչելի պատկերազարդ հանդես: Ամսագիրը հրատարակվում է մինչև 1990 թ.:

Հայաստանի անկախացումից հետո՝ 1996-2008թթ., Հայաստանի գրադարանային միությունը հրատարակել է իր տարեգիրքը՝ «Տեղեկագիր Հայաստանի գրադարանային միության» վերնագրով (թողարկվել է 10 համար): 2004-2014 թթ. ընթացքում Հայաստանի ազգային գրադարանը թողարկել է «Հոգևոր հայրենիք» ամսաթերթը, որն ավելի շատ գրական ուղղվածություն է ունեցել:

«Բանբեր Հայաստանի գրադարանների» ամսագիրն իր ուղղվածությամբ գիտա-մեթոդական է, լույս է տեսնելու վեցամսյա պարբերականությամբ, էլեկտրոնային ձևաչափով, նախատեսված է գրադարանագիտության, մատենագիտության և ավտոմատացված համակարգերի մասնագետների համար:

Նկատի առնելով այն բուռն փոփոխությունները, որոնք ընթանում են աշխարհի բոլոր գրադարաններում՝ կապված համակարգչային տեխնոլոգիաների և համացանցի տարածման հետ, ամսագրում բացի ավանդական գրադարանային խորագրերից, ինչպիսիք են «Գրադարան. Տեսություն և պրակտիկա», «Համայնքային գրադարաններ», «Գրադարանային կրթություն», «Գրահրատարակչություն և գրքագիտություն», կլուսաբանվեն նաև գրադարանային վիճակագրության, գրադարանային շուկայաբանության, թվային գրադարանների նախագծման հարցերը: Առանձին խորագիր կհատկացվի թանգարանագիտությանը:

Կարծում ենք՝ այն կնպաստի Հայաստանում գրադարանային գործի կարգավորմանն ու զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով վեր հանել արդիական մոտեցումներն ու գրադարաններին առաջադրված միջազգային չափանիշները:

Մաղթենք բարի երթ հանդեսին և ցանկանանք բեղմնավոր գործունեություն: